## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ (փոփոխություն) N1

### 08.06.2026թ. կնքված N ԷԱՃԱՊՁԲ-2026/16-16-ԵՊԲՀ-1 գնման պայմանագրի

ք. Երևան <<_ _>> <<_ _>> 2026թ.

**<< Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամը**, ի դեմս ռեկտոր **Ա. Ա. Մուրադյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Կոնցեռբ-Էներգոմաշ» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Բ.Թադևոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, հիմք ընդունելով 08.06.2026թ. կնքված **ԷԱՃԱՊՁԲ-2026/16-16-ԵՊԲՀ-1** գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5, 8.8-րդ կետերը, «Կոնցեռբ-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գրությունը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման»կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1 08.06.2026թ. կնքված N **ԷԱՃԱՊՁԲ-2026/16-16-ԵՊԲՀ-1** գնման պայմանգրի՝ նախատեսված 69-րդ,71-րդ, 72-րդ, 73-րդ, 74-րդ, 75-րդ, 76-րդ, 77-րդ, 78-րդ, 79-րդ չափաբաժինների մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով՝ մատակարարման վերջնաժամկետ սահմանելով 2026 թվականի օգոստոսի 6-ը:

**2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**<<ԳՆՈՐԴ>>**
**<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ**
**Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2**
**Բանկ՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ**
**հ/հ 11500166513800**
**ՀՎՀՀ 01503448**
**Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան**

______________________________

(ստորագրությունը)
Կ.Տ

Ստորագրող
ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ
2007720078

2026-06-17 13:54:18 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**«ՎԱՃԱՌՈՂ»**
**Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ**
**Հասցե՝ ք.Երևան, Արզումանյան փողոց 32-10**
**Արդշինբանկ ԲԲԸ**
**2481001168180025**
**01210095**
**Տնօրեն՝ Բ.Թադևոսյան**

Ստորագրող
ԱՐՄԻՆԵ ԲԱՏԻԿՅԱՆ
6103840430

2026-06-17 12:22:55 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**/ստորագրություն/**
**Կ.Տ**